Հայկական Սովետական Հանրագիտարան (Soviet Armenian Encyclopedia) 2.djvu/321

Exported from Wikisource on 06 օգոստոսի, 2024 թ.

Այս էջը հաստատված է

Մ . Բ . Բարկլայ դը Տոլի 1812-ին եղել է ռազմ, մինիստր, մեծ աշխատանք է տարել ռուս, բանակի հզորացման ուղղությամբ: 1812-ի Հայրենական պատերազմի սկզբին, որպես ռուս, բանակի գլխավոր հրամանատար,կազմակերպել է զորքերի հաջող նահանջը, որը, սակայն, ղժգոհություն է առաջացրել կառավարող շրջաններում և 1812-ի օգոստ . 17-ին Բ . հրամանատարությունը հանձնել է Մ . Ի . Կուտուզովին: Բորոդինոյի ճակատամարտում, որպես ռուս, բանակի աջ թևի և կենտրոնի հրամանատար, ցուցաբերել է զորավարի իր տաղանդն ու խիզախությունը: 1813–14-ին ռուս, զորքերի արտասահմանյան արշավանքի ժամանակ III բանակի, իսկ Կուտուզովի մահից հետո նաև ռուս–պրուսական բանակի գլխավոր հրամանատարն էր: Թաղված է Լիֆլյանդիայի Բեկլոր կալվածքում (այժմ՝ Ցիգելեստե, Էստոնական ՍՍՀ):

ԲԱՐ–ԿՈՒԲԱ (եբր . աստղի որդի), Հռոմի դեմ 132–135-ին հրեական ապըստամբության առաջնորդ Սիմոնի պատվանունը: Ապստամբության առիթ է ծառայել Հռոմի Ադրիանոս կայսեր որոշումը՝ Երուսաղեմում Յուպիտեր աստծո տաճար կառուցելու, թլպատումն արգելելու մասին: Ապստամբները Բ–Կ–ին համարել են իրենց մեսիան: Բ–Կ . գրավել է Երուսաղեմը և հռչակվել թագավոր: Ապստամբությունը դաժանորեն ճնշվել է, և յուրայինների հետ պաշարված Բ–Կ . սպանվել է վարձկանի ձեռքով:

ԲԱՐ–ՀԵԲՐԵՈՍ Գրիգոր Աբուլ Ֆարաջ (1225, Մալաթիա 1286, Մարաղա), ասորի մատենագիր, եկեղեցական գործիչ: 1264-ին ձեռնադրվել է Կիլիկիայի Հակոբիկ եկեղեցու արևելյան թեմերի կառավարիչ (մաֆրիան): Իմացել է հայերեն, արաբերեն, հունարեն: Գրել է մեկնություններ, կանոնսեր, զրույցներ, բանաստեղծություններ, բարոյախոսական և բժշկագիտական երկասիրություններ: Մեկնություններում օգտագործել է Աստվածաշնչի հայերեն թարգմանության տվյալները: Գործերից ամենաարժեքավորը «ժամանակագրություն»^ է, որը բաղկացած է երկու մասից՝ «Եկեղեցական» և «Քաղաքական»: Այն կարևոր տեղեկություններ է տալիս հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին: Գրկ . Baumstark A . , Geschichte der Syrischen Literatur, Bonn, 1922; Ortiz de Urbina S . Patrologia Syriace, Romac, 1958, p . 207–209 . Լ . <, . Տեր–Պետրոսյան

ԲԱՐՁ, հայ բդեշխների և նախարարների գահը արքունիքում (տես Գահնամակ):

ԲԱՐՁԱԿ, ուղղաձիգ բեռնվածքներ կրող հորիզոնադիր կոնստրուկցիայի մաս՝ հեծան, ֆերմա ևն, որի մի ծայրը կոշտ ամրակցված է հենարանին, իսկ մյուսը հենարան չունի: Բ–ի տարատեսակներից են՝ կալունակը, դեկորատիվ կիրառական իրերի պատվանդանները, որոնք ամրակցվում են պատին: Բ . են շենքի կամ որևէ կառույցի հիմնական ծավալից դուրս եկած հորիզոնական մասը, ելուստը, որոնք հիմնականում

ծառայում են որպես ճարտարաաեետական արտահայտչամիջոց: Բարձակային ցաւոկահարթակներ

ԲԱՐՁԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ, շինարարական կոնստրուկցիաներ, որոնց հիմնական կրող տարրը բարձակն է: Լինում են բարձակահեծանային (նկ .), բարձակաշրջանակային, բարձակակամարային և բարձակավանտային: Կիրառվում են շինարարության և տեխնիկայի տարբեր բնագավառներում, նավաշինության մեջ, օդանավերում (օդանավի թևը տարածական բարձակային ֆերմա է), մեքենաշինության մեջ նն: Կամրջաշինության մեջ կիրառվում են բարձակահեծանային (այդ Բազմաթռիչք բարձակահեծանային համակարգ համակարգի ամենամեծ կամուրջը, 549 մ երկարությամբ, կառուցվել է Կանադայում) և բարձակակամարային համակարգեր: Բ . հ–ի կիրառումը հնարավորություն է տալիս ստանալ կառուցվածքների կոնստրուկտիվ և հաշվարկային պարզ սխ՛եմաներ, առանձին դեպքերում՝ նյութի արդյունավետ օգտագործում և կոնստրուկցիայի կշռի թեթևացում:

ԲԱՐՁԻԿԱԲՈՐԲ, բուրսիտ (bursa պարկիկ, բարձիկ), հոդերի բարձիկների բորբոքում: Մարդկանց Բ–ի պատճառներ են՝ տրավմաները, վարակիչ հիվանդությունները, դիաթեզը, հոդերի հաճախակի և երկարատև գրգռումները: Լինում է սուր և քրոնիկական: Սուրբ–ի ժամանակ հոդերի բարձիկների լորձաթաղանթն ուռչում է, այտուցվում և դառնում ցավոտ, բարձիկներում հավաքվում է շճային կամ թարախային արտաքիրտ:

Քրոնիկական Բ. հաճախակի կապված է մարդու մասնագիտության հետ (ծնրադիր աշխատողներ): Քրոնիկականի դեպքում բարձիկների լորձաթաղանթը հաստանում է և բորբոքվում, հոդերի մեջ մեծ քանակությամբ հեղուկ է հավաքվում: Բուժումը՝ հոդերի հանգիստ, ֆիզիոթերապևտիկական միջոցառումներ; երբեմն վիրաբուժական միջամտություն:

ԲԱՐՁՐ ԴՈՒՌ, Օսմանյան կայսրության կառավարության (այսինքն՝ մեծ վեզիրի գրասենյակի և դիվանատան) պաշտոնական անվանումը եվրոպական դիվանագիտական փաստաթղթերում և գրականության մեջ մինչև թուրք, հանրապետության հռչակումը (1923): Բ. դ. անվանումը թուրքերեն՝ Փաշա կափիսի (փաշայի դուռ) և արաբերեն՝ Բաբ–ի–ալի (բարձրագույն հաստատություն, բառացի՝ բարձրագույն դուռ) արտահայտությունների ոչ ճիշտ թարգմանությունն է: Օգտագործվել են նաև՝ Օսմանյան դուռ, Փայլուն դուռ ձևերը:

ԲԱՐՁՐ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՖԻԶԻԿԱ, տես Տարրական մասնիկներ:

ԲԱՐՁՐ ԹԱՈՒԵՌՆ (Hohe Tauern), լեռնաշղթա Արևելյան Ալպերում, Ավստրիայում: Երկարությունը մոտ 120 կմ է: Կազմված է մինչև 3797 մ (Գրոսգլոքներ լեռ) բարձրության ալպյան տիպի ռելիեֆ ունեցող լեռնազանգվածներից: Բ. Թ–ից են սկիզբ առնում Զալցախ գետի աջ և Դրավա գետի ձախ վտակները:

1800–2000 մ բարձրությունները ծածկված են փշատերև անտառներով, ավելի բարձր՝ թփուտային և մարգագետնային բուսականությամբ: Արմ. մասում կան բազմաթիվ կաբային և հովտային սառցադաշտեր:

ԲԱՐՁՐ ՀԱՅՔ, Մեծ Հայքի առաջին նահանգը: Անտիկ հեղինակներին (Պլինիոս, Ատրաբոն) Բ. Հ. հայտնի էր նրա գլխավոր գավառ Կարինի՝ Կարանիտիս կամ Կարենիտիս անունով: Հայկ. սկզբնաղբյուրներում Բ. Հ. անունը բացառապես գործածել է VII դ. «Աշխարհացոյց»-ի հեղինակը՝ նկատի ունենալով նրա բարձր դիրքը: Բ. Հ. սովորաբար կոչվել է Կարնո աշխարհ, Կողմն Կարնո՝ նահանգի գլխավոր քաղաք Կարինի անունով: Տարածվում էր Արմ. Եփրատի վերին ու միջին ավազանում Հ ճորոխ գետի վերնագավառում: Մեծ ու բարձրադիր ջրաբաշխ է, որտեղից սկիզբ են առնում Եփրատ, ճորոխ և այլ գետեր: Լեռները լերկ են և զուրկ բուսականությունից (հնում այնտեղ եղել են անտառներ), տարածվում են արլ–ից արմ. և ըստ գլխավոր լեռնագագաթների ընդունում տարբեր անուններ՝ Պախր

About this digital edition

This e-book comes from the online library Wikisource[1]. This multilingual digital library, built by volunteers, is committed to developing a free accessible collection of publications of every kind: novels, poems, magazines, letters...

We distribute our books for free, starting from works not copyrighted or published under a free license. You are free to use our e-books for any purpose (including commercial exploitation), under the terms of the Creative Commons Attribution-ShareAlike 3.0 Unported[2] license or, at your choice, those of the GNU FDL[3].

Wikisource is constantly looking for new members. During the realization of this book, it's possible that we made some errors. You can report them at this page[4].

The following users contributed to this book:

- Nerkararyan
- Անահիտ Ավագյան

1. ↑ https://wikisource.org
2. ↑ https://www.creativecommons.org/licenses/by-sa/3.0
3. ↑ https://www.gnu.org/copyleft/fdl.html
4. ↑ https://wikisource.org/wiki/Wikisource:Scriptorium